



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

29 հունիսի

Օդեսայի հայկական մշակութային կենտրոնի սաներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց Օդեսայի (Ուկրաինա) հայկական մշակութային կենտրոնի կիրակնօրյա դպրոցի եւ մանկապարտեզի սաներին:

Կատանդներին սիրելի հայրենիքը, ապրել ազգային արժեքների ոգով ու շնչով, որպեսզի կարելի լինի իրականություն դարձնել հզոր, ծաղկուն եւ բարձր հայրենիք ունենալու տեսլականը: Հանդիպմանը Ամենայն Հայոց Հայրա-



Կենտրոնի տնօրեն տիկին Աննա Գետրգյանը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց դպրոցի եւ մանկապարտեզի գործունեության վերաբերյալ ընդգծելով, որ սաների այցը Հայաստան նպատակ է հետապնդում ճանաչելու հայրենիքը: Վերջինս նաեւ հայտնեց, որ 44-օրյա պատերազմի ընթացքում երեխաները հանդես են եկել համերգներով եւ գոյացած ողջ հասույթն ուղղել Արցախ:

Այս առիթով սաները հանդես եկան հոգեւոր, ազգային ու հայրենասիրական երգերի եւ բանաստեղծությունների կատարումներով՝ ուրախություն պարգևելով Հայոց Հորը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր հայրական օրհնությունը բերեց պատանի հայորդիներին՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ ծնողներին եւ մանկավարժներին՝ սաներին ազգային ոգով կրթելու եւ դաստիարակելու համար: Հայոց Հովվապետն ընդգծեց, որ նրանք հայ ժողովրդի հույսն են, կամքն ու ապագան: Նորին Սրբությունը պատգամեց մանուկներին եւ

պետը գոհունակությամբ փաստեց նաեւ, որ Ուկրաինայի հայ համայնքում, շնորհիվ հայոց թեմի եւ ազգային կառույցների գործունեության, նախանձախնդրությամբ են վերաբերվում ազգային ինքնության, մշակութային եւ հոգեւոր ժառանգության պահպանությանը, որի լավագույն դրսևորումն է հայորդիների այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այս առիթով Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված գորացնի պատանի հայորդիների հոգիներում սերն առ հայրենիքը, ուժ եւ կարողություն պարգևի հայեցի շնչով հասակ առնելու եւ հայ ժողովրդի արժանավոր զավակներ դառնալու համար:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը հետաքրքրվեց նաեւ Օդեսայի հայ համայնքի կյանքով եւ հայկական կառույցների գործունեությամբ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց պատանի հայորդիներին, այցի առիթով նրանց ընծայեց խաչեր ու սրբապատկերներ:

9 հուլիսի

Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման հարցերով հանձնակատարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման հարցերով

հանձնակատար Օլիվեր Վարհեյին՝ ուղեկցությամբ Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա-

Վիկտորինի եւ ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչության ղեկավար Աննա Աղաջանյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց պրն Օլիվեր Վարհեյին՝ տարածաշրջան այցի շրջանակներում ժամանումը Հայաստան՝ ընդգծելով, որ այս այցելությունը մոր խթան պիտի հաղորդի ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացմանը: Վեհափառ Հայրապետը նաեւ ողջունեց Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման հարցերով հանձնակատարի այցը Սուրբ Էջմիածին՝ դա նկատելով Հայոց եկեղեցու կարեւոր դերակատարության վկայություն: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը նկատեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ակնկալում է Եվրոպական Միության հետ ընդհանուր հետաքրքրություններ կապող հարցերի շուրջ առավել շոշափելի եւ գործնական գործակցություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս հանձնակատարի, մասնավոր իր գնահատանքը հայտնեց Եվրոպական Միության կառույցներին՝ անցած տարիներին եւ հատկապես համավարակի շրջանում, արցախյան երկրորդ պատերազմի օրերին եւ հետպատերազմյա ժամանակահատվածում Հայաստանին եւ հայ ժողովրդին

կան զարգացմանն ուղղված ԵՄ-ի ապագա ծրագրերը եւ առաջարկները: Վերջինս խաղաղության հաստատման, ապագայի համդեպ հույսի եւ հավատի զորացման հարցում կարեւորեց գործակցությունը Հայոց եկեղեցու հետ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգությամբ անդրադարձ կատարեց հետպատերազմյա իրավիճակին եւ առկա բազմաթիվ մարտահրավերներին՝ նաեւ հույս հայտնելով, որ ԵՄ-ի կառույցների, ԵԱՀԿ Մինսկի խմբի համամիտագահող երկրների եւ բարեկամ պետությունների աջակցությամբ արցախյան հիմնահարցը կստանա իր վերջնական կարգավորումը, ինչը կերաշխավորի արցախաբնակ հայորդիների անվտանգությունն ու ապահովությունը:

Ողջունելով ԵՄ-ի պատրաստակամությունը տարբեր ներդրումային ծրագրերի միջոցով նպաստելու տարածաշրջանային հիմնախնդիրների լուծմանը՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերների շուտափույթ հաղթահարման կարեւորությունը: Այս առիթով Նորին Սրբությունը մասնավորապես անդրադար-



ցուցաբերված գորակցության եւ աջակցության համար:

Այնուհետեւ Հայաստան այցին անդրադարձավ Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեյին՝ այդ շրջանակներում կարեւորելով իր հանդիպումն Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Պրն Վարհեյին Նորին Սրբությանը ներկայացրեց այցի նպատակները, առ այսօր տարբեր ծրագրերի միջոցով Հայաստանին ցուցաբերված հումանիտար օգնությունը եւ առկա ճգնաժամի հաղթահարմանը, տարածաշրջանում կայունության ու խաղաղության ամրապնդմանը, տնտեսա-

ծավ Ադրբեջանում պահվող ռազմագերիների խնդիրն, ապա իր մտահոգություններն արտահայտեց Հայաստանի սահմանների նկատմամբ կատարվող ոտնձգությունների, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման, արձանագրված սրբապղծության, ավերման եւ պատմական պատկանելության կեղծման հարցերի առնչությամբ: Հիշյալ հարցերի հաղթահարման եւ հայատյացության քարոզի դադարեցման գործում Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորեց միջազգային հանրության դերակատարությունն ու կեցվածքը:

ՄՇԱՄՐՈՆՆԵՐ ԱՊՈՐԲ ԵՒ ՕՐԻՆՈՒՅՈՒՆ ԶԻՎԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԲԱՐԻ ԻԽՇԱՏԱԿԻՆ

Նույսի 6-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել դուղուկահար, ժողովրդական արտիստ Զիվան Գասպարյանի սգակիր ընտանիքին:

«Հայ երաժշտարվեստի երախտավոր, տաղանդաշատ դուղուկահար Զիվան Գասպարյանն ի Տեր ննջեց ստեղծագործական բուռն գործունեության հարուստ վաստակով, սիրված ու գնահատված մեր ժողովրդի կողմից: ...Նա տասնյակ տարիներ Հայաստանի եւ արտերկրի բազմաթիվ բեմերում ներկայացրեց հայ երաժշտարվեստի գոհարները՝ ծառայելով մեր մշակույթի ճանաչման ու տարածման երախտարժան գործին:

Բարեհիշատակ Զիվան Գասպարյանի կատարումները լայնորեն օգտագործվել են մաեւ համաշխարհային կինոարվեստի ասպարեզում մեծ հաջողություններ արձանագրած ֆիլմերում: Դուղուկի մեծ վարպետը՝ իր ուրույն ձեռագրով ու արվեստագետի ծաշակով արժանացել է հայրենական ու միջազգային բազմաթիվ պարգևների ու մրցանակների, պետական բարձր կոչումների»,- մշված է Հայոց Հայրապետի ցավակցական գրության մեջ:

Նորին Սրբությունը հայցել է, որ ողորմածն Աստված երկնային Իր հանգրվաններում լույսերի ու խաղաղության մեջ ընդունի հանգուցյալ իր ծառայի՝ Զիվան Գասպարյանի լույս հոգին եւ արժանացնի երանավետ հանգստյան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ցավակցություններն է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ հուլիսի 6-ին Կամչատկայում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի ունեցած ավիավթարի առիթով:

Նորին Սրբությունը Ռուսաստանի ողջ ժողովրդին, զոհվածների ընտանիքներին ու հարազատներին փոխանցել է Հայոց Եկեղեցու հոգեւոր դասի եւ հայ ժողովրդի վշտակցությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցել է Բարձրյալ Տիրոջը՝ երկնային օթեւաններում խաղաղության մեջ հանգչեցնել ողբերգության հետեւանքով զոհվածների հոգիները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջինման մաղթանքներ է հղել Ֆրանցիսկոս Պապին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուտափույթ ապաքինման մաղթանքներ է հղել օրեր առաջ վիրահատության ենթարկված Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապին:

Եղբայրական իր սերն ու ողջույնները փոխանցելով Ֆրանցիսկոս Պապին՝ Վեհափառ Հայրապետը հայցել է երկնավոր Տիրոջը պահել ու պահպանել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետին՝ պարգևատրելով կենաց արեւշատություն եւ արդյունավոր գահակալության բազում տարիներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաժնեց նորած Աթանաս արքեպ Սարգսյանին

Նույսի 2-ին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց նորած Աթանաս արքեպ Սարգսյանին՝ ուղեկցությամբ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպս Աբրահամյանի: Հայր Աթանասը վերջերս է արժանացել քահանայական կոչման Գանձասարի վանքում եւ քառասունյա պահեցողության շրջանն անցկացրել Դաղիվանքում:

Հանդիպման սկզբում Վրթանես Եպիսկոպոսը ներկայացրեց հայր Աթանասին՝ անդրադառնալով հայր սուրբի ծառայությանը մախ ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդությունում եւ ապա Արցախի թեմում: Սրբազան հայրը մասնավորապես ընդգծեց, որ հայր Աթանասն իր ծառայությամբ մշտապես արդարացրել է հոգեւոր առաջնորդի սպասելիքները եւ ամենուրեք արժանացել հարգանքի ու բարձր գնահատանքի:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրական իր օրհնությունն ու շնորհավորանքները բերեց հայր Աթանասին՝ ձեռնադրության եւ անդրանիկ պատարագի մատուցման առիթով: Հայոց Հովվապետը մաեւ իր գնահատանքը հայտնեց երիտասարդ եկեղեցականին՝ Դաղիվանքում դժվարին պայմաններում նվիրյալ ծառայության եւ դրսևորած բարձր պատասխանատվության համար:

Վեհափառ Հայրապետը Արցախի թեմի առաջնորդի հետ զրույցում անդրադարձ կատարեց Դաղիվանքում բնակվող եկեղեցականների ծառայության պայմաններին, վանքի հոգեւոր առաքելությանը եւ ուխտավորների այցելություններին խոչընդոտող հանգամանքներին եւ այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ ժամանակի ընթացքում առկա դժվարությունները կհարթվեն:

Վերջում Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց նորած Աթանաս արքեպին՝ մաղթելով ամուր հավատ եւ բեղուն հոգեւոր սպասավորություն՝ ի փառս Աստծո եւ ի պայծառություն Հայոց Եկեղեցու:



«Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» ռեանսանի շնորհում դասավոր Հրաչիկ Սարգսյանին

Նույսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Հայաստանում իրավունքի հաստատման ուղղությամբ մեծ վաստակի, հայրենամկեր, եկեղեցասեր ու ազգաշահ իրագործումների համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշան հանձնվեց դատավոր պրն Հրաչիկ Սարգսյանին:

Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին ողջունեց Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ արք. Կարապետյանը: Մեծարյալի կյանքին ու ազգանվեր գործունեությանն անդրադարձավ ՀՀ վերաքննիչ



ղեկական հայեցակարգային բաժնի տնօրեն Վազգեն Եպս Միրզախանյանը:

ները բարի արդյունքն են ձեր մախանձախնդիր, անհոգմաբեկ աշխատանքի:

Անկեղծ հոգով Դուք դրսևորել եք մաեւ ձեր որդիական սերն ու նվիրումը հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ օժանդակություն բերելով Մայր Աթոռի գործունեությանը:

Մեր ժողովրդին եւ մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած ձեր ծառայությանը բարձր գնահատանքով հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը»:

Կոնդակի հրապարակումից հետո Վեհափառ Հայրապետը մեծարյալի կործքը զարդարեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո շքանշանով:

Ապա շնորհակալական խոսք ասաց տիար Հրաչիկ Սարգսյանը: Վերջինս նշեց, որ իր գործունեության ընթացքում մշտապես ջանացել է արդարադատությունը իրականացնելու հետ մեկտեղ մարդկանց

փոխանցել եկեղեցու պատվիրանները՝ ընդգծելով, որ նույնականություն կա այդ պատվիրանների ու արդարադատության միջեւ, որի հիմքում հենց աստվածաշնչյան պատվիրաններն են:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբության օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը վերստին անդրադարձավ Հրաչիկ Սարգսյանի հայրենասեր եւ եկեղեցանվեր ոգուն, ինչպես մաեւ Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակի՝ Մայր Աթոռի նկատմամբ մշտական հոգածու վերաբերմունքին: Իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերելով պարոն Սարգսյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց, որ Բարձրյալն Աստված Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո հանապազ պահի ու պահպանի ազգի նվիրյալ զավակին եւ Սարգսյան ընտանիքին եւ շնորհի արեւ-



քաղաքացիական դատարանի նախկին դատավոր Արթուր Սմբատյանը: Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո բերվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի եկե-

ւ արդարադատության մարմիններում Դուք կարելին ի սպաս եք դրել հանուն մեր երկրում օրինահարգ հասարակության ձեւավորման: Մասնագիտական գործունեության մեջ ձեր հաջողություններն ու ձեռքբերում-



շատություն, նորանոր հաջողություններ եւ երկնահեղ ամենայն բարիք:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ նրա հայրենականներ գերդաստանը

Սկիզբը՝ թիվ 9—12

«Ա. Մուշեղեանի «Կորիւն, թէ՛ Ազաթանգեղոս» հետազոտութեան («Գիտութիւն» պարբերաթերթ, 1996, մարտ-ապրիլ) որոշ կետեր առնչուում են Գ. Վինկլերի արծարծած խնդիրներին եւ անկասկած համապատասխան արձագանգ էին գտնելու գերմաներէն թարգմանութիւնում, եթէ վերջինս շարադրուած լինէր Մուշեղեանի յօդուածաշարից յետոյ» (Գ. Աբգարեան, «Հանդէս ամսօրեայ»):


Ինքնին հասկանալի է, որ Հայոց գրերի գյուտին վերաբերող գերմաներէն հրատարակության մեջ պետք է շոշափվեր նաեւ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած վրաց գրերի խնդիրը: «Գ. Վինկլերը համոզված է,— գրում է Գ. Աբգարյանը,— որ վրացերէնը պաշտօնական լեզու է ընդունվել միայն քրիստոնեությունը ընդունելուց հետո: Ըստ այսմ էլ հավանական է համարում, որ վրացական գրերը նույնպես ստեղծվել են միեւնոյն առիթով: Այս համոզմունքից հետո, թվում է, թէ պետք է հաջորդէր Մաշտոցի հեղինակության ընդունումը: Սակայն հարգարժան հեղինակը գրում է. «Հայկական եւ վրացական այբուբենների մի ուշագրավ համեմատություն է մեզ մատուցում Պատարիձեն»:

Վերջինս իր գերմաներէն հոդվածում փորձ է անում գտնել գծագրական ընդհանրություններ հայկական որոշ տառերի եւ իբր վաղուց գոյություն ունեցած վրացական գրերի միջեւ: Սա դիվանագիտական քայլ է, որով կողմնակիորեն գլխի է զգվում, թէ հայկական այբուբենը ստեղծվել է վրացականից հետո եւ վրացականի օգտագործմամբ: Եթէ մինչ այդ վրացագետները բավարարվում էին միայն Մաշտոցի վաստակը ժխտելով, ապա այժմ «ապացուցում են», որ Մաշտոցն ինքն է հայկական այբուբենը ստեղծելիս օգտվել վրացական տառերից: Սակայն մասնագետներին քաջ հայտնի է, որ գծագրական առնչությունների հիման վրա այբուբենների ժամանակագրական հերթականությունը որոշել հնարավոր է միայն այն դեպքում, եթէ ստույգ հայտնի է երկու այբու-

բենների ստեղծման ժամանակը: Այլապես՝ գծագրական յուրաքանչյուր ուսումնասիրություն մնաւիւմ է 6 եւ 9 թվանշաններով խաղին: Եթէ 6-ը գլխիվայր շրջենք, կդառնա 9:

Բելգիացի արեւելագետ Պ. Պետերսն արդեն նկատել է, որ վրացագետներին հուզում է ոչ այնքան իրենց այբուբենին օտար ծագում վերագրելը (նրանք գերադասում են վրացական տառերը բխցնել հեռավոր ու մեռած փյունիկյան կամ արամեական գրություններից եւ ոչ թէ դրկիցների կենդանի այբուբենից), որքան «այն, որ լուսավորությունը ծագել է Հայաստանից»: Իսկ սա մշակույթն է, որ հարցը բնավում է ազգային արժանապատվության դիրքերից: Նման պայմաններում ճշմարտությունը բացատրելու առաքելությունը մնում է օտար գիտնականներին, որոնք հայ-վրացական շահագրգռություններից պետք է որ հեռու կանգնեն եւ ուսումնասիրությունը վարեն անկողմնակալ բնույթամբ» (Գ. Աբգարյան, «Հայաստան»):

Գ. Վինկլերի աշխատության վերաբերյալ այս կարեւոր ցուցումների հետ միասին Գ. Աբգարյանն ուշագրավ դիտողություն է անում, որ 1991 թվին աշխատությունն ավարտելուց հետո մինչեւ 1994 թվին գրքի լույս ընծայումը կատարված ուսումնասիրությունները բնականաբար չեն բնութագրվել: Շարունակելով այս միտքը՝ ես հարկ եմ համարում ընդգծել, որ մաշտոցագիտությունը հաջորդ տասնամյակներում ապրեց բուռն զարգացման մոր շրջան՝ շնորհիվ Հայ գրերի գյուտի եւ Մաշտոցի հետ կապված հոբելյանների (1990-ական թվերին տողերիս հեղինակը մոր տեսանկյունից է բացահայտել Մաշտոցի գործունեությունը՝ ցույց տալով, որ նա հեթանոս դարապետների աշխատությունների հիման վրա վերականգնել է հին Հայոց այբուբենը եւ մշա-



նագրերը — А. Мушегян. Армянские буквы за более чем четыре века до Месропа Маштоца, «Голос Армении», 2006, 23 мая, №52. Ա. Մուշեղյան. Մեսրոպ Մաշտոցը եւ նախամաշտոցյան հայ գիրը, «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 2006, №2, էջ 210—236. նույնի՝ Մեսրոպ Մաշտոցը եւ նախամաշտոցյան հայ գիրը (լրացված տարբերակը՝ Գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երեւան, ԳԱԱ հրատ., 2006, էջ 79—98):

«Հակառակ Նորայր Բիւզանդացու, որը ս. Մաշտոցի վարքի վերոյիշեալ քննական բնագրում («Հանդէս ամսօրեայ», 1992, էջ 123) մկրտութեան գաղափարն Ազաթանգեղոսի երկում համարում է «կարկաստում բանք»,— առաջ է տանում Գ. Աբգարյանը,— Գ. Վինկլերն իրաւացիօրէն գտնում է, որ Ազաթանգեղոսը նկատի է ունեցել հէնց մկրտութիւնը, երբ յայտնում է, որ Գրիգոր Լուսաւորիչը վերստին ծնեց ժողովրդին (Winkler G., S. 258.): Նոյնը հաստատում է նաեւ Ա. Մուշեղեանը (Մուշեղեան Ա., Կորիւն, թէ՛ Ազաթանգեղոս, «Գիտութիւն», էջ 3):

«Մկրտութեանը վերաբերող հատուածը նկատի ունենալով՝ Վինկլերը յայտնում է, որ Կորիւնը հայոց այբուբենի ծնունդը պատ-

կերել է Ազաթանգեղոսից քաղած տուեալների համաձայն. «Մկրտութեան մասին եղած հնագոյն պատկերացումներից մէկը կապուել է ծննդեան ընթացքի հետ, եւ նրա ծագումը պէտք է որոնել Սիրիայում, ինչպէս որ ցոյց են տուել իմ շատ աշխատութիւններում: Մկրտութեան՝ որպէս ծննդի պատկերումը Կորիւնը ձեւել է հայկական այբուբենի ծննդի վրայ: Քանի որ կասկածից վեր է այն, որ ծննդեան պատկերը («ի Հոգւոյ յարգանդէ» ինչպէս որ Ազաթանգեղոսն է ասում) վերաբերում է մկրտութեանը ... անհրաժեշտ է Տրդատի մկրտութեան առիթով կիրառուող այս գաղափարին Ազաթանգեղոսի դէպքում, յատկացնել առաջնութիւնը, իսկ նրա ներմուծումը Կորիւնի կողմից՝ հայկական այբուբենի ստեղծման պատմութիւնը ներկայացնելիս՝ համարել երկրորդական» (Winkler G., S. 258—259): Պարզ ասած՝ Ազաթանգեղոսը գրել է Կորիւնից առաջ: Սա Գ. Վինկլերի մենագրութեան ամենաուշագրաւ արդիւնքներից է, որը կարելի է տարածել առհասարակ Ազաթանգեղոս—Կորիւն յարաբերութեան վրայ» (Գ. Աբգարեան, «Հանդէս ամսօրեայ»):

«Տրդատի ծնունդը» ակնարկելով՝ Գ. Աբգարյանը նկատի ունի Ազաթանգեղոսի Պատմության Առաջաբանի 13-րդ պարբերությունը, որտեղ կարդում ենք. «Իսկ բարեացապարտն Տրդատ յանկարծական՝ կենացն ասպնջական ցանկալի ամենեցուն լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն որդի գտանէր շնորհօքն Աստուծոյ, եւ յաւիտենական կենացն մերձաւոր լինէր»:

«Գովելիւմս Պոստելը 1538 թ. Ֆրանսիայում եւ Թեոդոս Ամբրոսիոսը 1539 թ. Իտալիայում իրենց աշխատություններում տպագրել են հայկական տառերի նմուշներ,— գրում է Գեորգ Աբգարյանը:— Սրանք մինչեւ այժմ համարվում էին ամենավաղ տպագրությունները: Սակայն վերջերս մեզ վիճակվեց պարզել, որ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենի տպագրության հայրենիքը Գերմանիան է, եւ որ այբուբենը տպագրվել է առաջին անգամ դեռեւս 1486 թ.»։ ➔ էջ 4

ՀԱՅ ԿՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ



Սկիզբը՝ թիվ 11—12

Քրական ֆոնդերի մյուս ենթաբաժնում (հուշային) գետեղված է գրական-հուշային մոտ 52 000 առարկա: Այստեղ են պահպանվում գրական ֆոնդերի հետ եւ առանձին թանգարան մուտք գործած կերպարվեստի գործեր, անձնական իրեր, լուսանկարներ, նեգատիվներ, դրոշմանիշներ, տպագիր հուշային նյութեր եւ այլն: Բացառիկ գեղանկարչական աշխատանք է 1830 թ. Դորպատում գերմանացի նկարիչ Ֆրիդրիխ Լյուդվիգ ֆոն Մայդելի ստեղծած Խ. Աբովյանի դիմանկարը, որը մեծ գրողի ու լուսավորչի՝ մեզ հասած միակ վավերա-

կան դիմապատկերն է: Հիշարժան է նաեւ հայ գեղանկարչության նահապետի՝ Մարտիրոս Սարյանի՝ 1923 թ. վրձնած «Եղիշե Զարեանցի դիմանկարը» ստեղծագործությունը, մեծ բանաստեղծի կերպարը հավերժացնող մի գլուխգործոց, որ դարձել է թանգարանի այսօրվա յուրօրինակ խորհրդանիշը: Նշված փաստը հաշվի առնելով՝ կուզենայինք ներկայացնել խնդրո առարկա կտավի՝ թանգարանում հանգրվանելու պատմությունը. Սարյանն իր հայտնի «Եղիշե Զարեանցի դիմանկարը» ստեղծել է 1923 թ.: 1924-ին այն ցուցադրվել է Վենետիկի 14-րդ միջազգային բիենալում: Դժոխակ 1937-ին պատկերասրահի բա-

կում այրում են վարպետի վրձնած 12 դիմանկարները, որտեղ պատկերված էին «Ժողովրդի թշնամի» հայտարարված հայ պետական գործիչներ ու մտավորականներ: Այդ դիմանկարներից փրկվում է միայն «Եղիշե Զարեանցի դիմանկարը» կտավը. Գրականության եւ արվեստի թանգարանի նվիրյալ աշխատակիցներ գրականագետ, արվեստաբան Նշան Մուրադյանն ու Պարգեւուհի Սիմոնյանը թաքցրել էին այն չեղեացրող մի անկյունում՝ պահարանի հետեւում, որտեղ դիմանկարը մնացել է շուրջ 20 տարի: Հետագայում, երբ պարզվում է իրողությունը, հուզված Սարյանը որոշում է նկարը որպէս պարգէւ նվիրել Մուրադյանին: Վերջինս մերժում է մեծ նկարչի առաջարկը՝ անձամբ նվեր ստանալ փրկված դիմանկարը, եւ թողնում այն Գրականության եւ արվեստի թանգարանում: Ի դեպ՝ Զարեանցի դիմանկարի մետաքսե ծաղկազարդ գլխաշորն այսօր թեւէ մաշված ու գունաթափ, բայց որպէս ցուցանմուշ ներկայացված է Մ. Սարյանի տուն-թանգարանում:

Ժամանակի գրական կյանքն ու գրողներին ներկայացնող մեծարժեք ստեղծագործություններ են նաեւ հայ դասական արվեստագետներ Գ. Բաշինջադյանի, Փ. Թերլեմեզյանի, Ե. Թադեւոսյանի, Վ. Սուրենյանցի, Հ. Գյուրջյանի, Ե. Քոչարի, սփյուռքահայ նկարիչներ Ա. Սարուխանի, Դեհի, լուսանկարիչներ Ս. Խանդիկյանի, Պ. Գալինյանի եւ բազում այլ արվեստագետների աշխատանքները, որոնք զարդարում են թանգարանի մշտական ցուցադրությունն ու ժամանակավոր ցուցահանդեսները: Ժամանակի հայ գրքարվեստի պատմության մասին պատկերացում կազմելու համար կարեւոր են Գ. Շարբա-

չյանի, Կ. Տիրատուրյանի եւ այլ նկարիչների կատարած ձեւավորումները:


Անձնական եւ ընտանեկան լուսանկարներով հարուստ են Մ. Մեծարենցի, Ինտրայի, Հ. Թումանյանի եւ շատ ուրիշների ֆոնդերը: Ենթաբաժինը հարուստ է նաեւ գրողների անձնական կահույքով ու իրերով: Այս առումով աչքի է ընկնում հայ խոշորագույն թատերագիր Գաբրիել Սունդուկյանի ֆոնդը, որի մասնատիպ նյութերով կարելի է ստեղծել մի ամբողջ հուշային թանգարան: Հատկանշական է, որ արեւմտահայ վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի՝ թանգարան բերված զանգի բեկորների հիման վրա մշակվող գանգաբան Ա. Ճաղարյանը վերականգնել է նրա հնարավորինս վավերական դիմաքանդակը: Հիշարժան է նաեւ արեւմտահայ մեր մյուս վաղամեռիկ բանաստեղծական մեծության՝ Միսաք Մեծարենցի ֆոնդում պահպանվող մի հուշային առարկա՝ նրա մատանին, որ բանաստեղծի մոր նվերն է՝ չափազանց խոսուն եւ հուզիչ:

Անհատական ֆոնդերի կազմում թանգարան են մուտք գործել եւ թանգարանի սեփականությունը դարձել նաեւ եղեմնամահ գրողներ Գրիգոր Զոհրապի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սեւակի՝ սրբազան նշխարներ դարձած որոշ անձնական իրեր: Հիշյալ ենթաբաժնում մեծ տեղ են գրավում նաեւ ժամանակի գրական կյանքին աղերսվող բազմապիսի այլ նյութեր՝ այցեքարտեր, հրավիրատուներ, կոնդակներ, օրացույցներ, ալբոմներ եւ այլն:

Թատերական ֆոնդերում են տեղ գտել հայ թատերարվեստի գործիչներին վերաբերող 120 ֆոնդ ու հավաքածու՝ 250 000-ից ավելի նյութերի ընդգրկմամբ:

➔ էջ 6, 8

Վաթսուկականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը



Սկիզբը՝ թիվ 12

Գրականության համայնքը, ազգային, փոխադասական, հոգեբանական հիմնական գծերը վերարտադրելու համար անհրաժեշտ է գտնել-հայտնաբերել ժամանակի էությունը ու ոգին իր մեջ խտացնող հերոսին։ Միայն ժամանակին բնորոշ բազմատեսակ ու հիմնական հատկանիշներն իր մեջ ամփոփող հերոսի ընտրությամբ կարելի է գտնել առանձնահատկությունների այն ամբողջությունը, ինչն այս ժամանակը պետք է տարբերի մախրողից, այս ժամանակի մարդուն (հերոսին)՝ նախորդ ժամանակների մարդկանցից (հերոսներից)։

Այսուհանդերձ՝ սոսկ ժամանակին բնորոշ հերոսի հայտնաբերմամբ չեն սպառվում իրականության կարեւորություն ունեցող խնդիրները, կան նաեւ այլ զուգահեռ իրո-

ղություններ, որոնք հարուստ հենք են ստեղծում գլխավոր վիճակների ու իրադրությունների համար։ Բացի դա՝ ժամանակի համար կարեւոր նշանակություն են ստանում նաեւ արդիականության դիրքերից հին խնդիրների, թվում է, թե անցյալի գիրքն անցած հարցերի վերանայումն ու նորո-

վի մեկնաբանումը։

Կյանքը միագիծ, պարզունակ վիճակների, հարաբերությունների ու կապերի շարան է, ինչպես պատկերացումն են մեր որոշ գրողներ ու քննադատներ։ Ժամանակակից մարդն ապրում է բազմաբնույթ վիճակներ ու հարաբերություններ, դրանցից մի քանիսը կարող են լինել գլխավոր-հիմնական, մնացածները՝ երկրորդական-լրացուցիչ, բայց՝ կարեւոր։ Այս առումով ճիշտ են «Սովետական գրականություն» ամսագրի համար Զինգիդ Աթմատովի գրած հոդվածի հետեւյալ մտքերը, որ նա արտահայտում է դրական հերոսի առիթով. «Հավանորեն դրական հերոսի էությունը մշակելու փորձերը հիմնավորված չեն։ Հավանորեն ամեն անգամ, ամեն մի նոր ստեղծագործության մեջ դա կլինի մի զարմանալի ծանոթություն մեր օրերի անթիվ հերոսական

բնավորություններից մեկի հետ» (2. Աթմատով, Մեր գրականության եւ արվեստի անկյունաքարերը, «Սովետական գրականություն», այսուհետեւ՝ ՍԳ, 1973, թիվ 1, էջ 123)։ Այս կարծիքը հավաստի է ոչ միայն դրական հերոսի, այլեւ, ընդհանրապես, ժամանակակից գրականության հերոսի համար։

Մարդու կյանքն աներեւակայելիորեն հարուստ է, բարդ ու համադրական։ Նույնիսկ միեւնույն մարդը տարբեր վիճակների ու հարաբերությունների մեջ կարող է տարբեր կողմերով ներկայանալ, անգամ երբեմն կարող է այնպես թվալ, թե միեւնույն մարդու մեջ տարբեր մարդիկ են ապրում. մեկ մարդը մի քանի մարդ է։ Գրականության գլխավոր նպատակը պետք է լինի ժամանակի այդ բազմակողմանի մարդու լիարժեք, ամբողջական նկարագրի ստեղծումը։ Բայց, մինչ այս հարցերի մեջ խորանալը, նախ, ժամանակակից արձակի ընձեռած հնարավորություններից ելնելով, փորձենք ճանաչել այսօրվա կյանքն ու այդ կյանքն իր մեջ կրող մարդուն՝ գրական հերոսին, առանձնացնել նրա բնավորությանն ու հոգեբանությանը բնորոշ կողմերը եւ ապա դա հարաբերության մեջ դնել կյանքի հետ ու պարզել այդ հերոսի կենսականության լիարժեքության աստիճանը։ Փորձենք թափանցել ժամանակակից արձակագիրներից մի քանիսի աշխարհը եւ ճշտել նրանց ստեղծագործական առնչություններն այսօրվա կյանքի եւ իրականության հետ։

Բ.

Մինչ առանձին հեղինակների անդրադառնալը՝ անհրաժեշտ է մտաբերել գրական այն բանավեճը, որ ծավալվեց հայ արձակագիրների միջեւ 1960-ականների երկրորդ կեսին. գրական ուշագրավ մի բանավեճ, որի նպատակը ժամանակի հերոսի հիմնական նկարագրի հայտնաբերումն էր։

Նորագույն արձակի զարգացման միտումներին նվիրված խոսակցությունն սկսվեց 1966-ին՝ Վարդգես Պետրոսյանի «Ինչպե՞ս ստանալ միջին ազգային կերպար» («Սովետական Հայաստան» օրաթերթ, թիվ 287) եւ Հրանտ Մաթևոսյանի «Սպիտակ թղթի առջեւ» («Գրական թերթ», այսուհետեւ՝ ԳԹ, թիվ 42) հոդվածներով։ 1968-ին այդ խոսակցությունն ընդունեց բանավեճային բնույթ. սկսվեց Վարդգես Պետրոսյանի «Հավասարում» բազմաթիվ անհայտնաբերված հոդվածով («Գարուն», 1968, թիվ 3), որին արձագանքեցին Գեորգ Արշակյանը («Աշխարհի հետ՝ բանականությանը», ԳԹ, 1968, թիվ 35), Հրանտ Մաթևոսյանը («Այսպես կոչված գյուղագրության մասին», ԳԹ, 1968, թիվ 37), Պերճ Չեթունյանը («Սրբում, թե հաշտեցում։ Հափանիշ», «Գարուն» 1968, թիվ 8), Նորայր Աղայանը («Եվս մի քանի անհայտներ», «Գարուն», 1968, թիվ 11)։ Մաթևոսյանի հոդվածի առիթով պատասխան խոսքով հանդես եկավ Պետրոսյանը՝ «Հուսով եմ կներես անկեղծության համար, բայց...» (ԳԹ, 1968, թիվ 44)։ ➔ էջ 5, 8

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ նրա հայրենական գերդաստանը

← էջ 3

Եկրոպական տպագրության մեծ հայտնագործող Գուտենբերգի մահից 18 տարի անց Մայնցում, Բերնհարդ ֆոն Բրայդենբախի «Ուխտագնացություն դեպի Ավետյաց երկիր» ուղեգրության հետ, տպագրվել է ժամանակի նշանավոր հոլանդացի նկարիչներից Ռեուվիխի ձեռքով գծված մետրոպոլիտանական փայտափորագիր հայերեն այբուբենը՝ վերետուն դրոշմված հայերեն անուններով։

«Մարդկությունն ակնածանքով է հարգում Գուտենբերգի հիշատակը, — շարունակում է Գ. Աբգարյանը։— Գրքեր տպագրելիս ոչ ոք չի նեղվում այն փաստից, որ Գուտենբերգը գերմանացի է։ Երախտագիտությունը բարձրագույն առաքինություն է» (Գ. Աբգարյան. «Հայաստան»)։


Այդ նույն երախտագիտությամբ էլ ես հիմա վերհիշում եմ շուրջ քառասուն տարի առաջ տեղի ունեցած մի բախտորոշ դրվագ, որը կանխորոշեց իմ գիտական գործունեության հետագա ընթացքը։ 1983 թվի փետրվարի 22-ին Գրականության ինստիտուտում ես քննարկման ներկայացրի «Կորյուն, թե՛ Ազաթանգեղոս» ուսումնասիրությունը — այդ երկու նշանավոր երկերում պանծացվում են երկու դարակազմիկ իրադարձություն՝ քրիստոնեության տարածումը Հայաստանում, այլ կերպ՝ Հայոց դարձը Գրիգոր Լուսավորչի ձեռքով IV դարի սկզբին եւ Հայ գրերի գյուտը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով V դարի սկզբին (405 թ.)։ Իմ ուսումնասիրությամբ ես առաջին անգամ հայ բանասիրության եւ պատմագիտության մեջ առաջ էի քաշում Ազաթանգեղոսի Պատմության առաջնության հարցը՝ Կորյունի «Վարդ Մաշտոցի» երկի նկատմամբ։

Խնդիրն այն է, որ այդ երկու նշանավոր երկերում առկա են բազմաթիվ նույնանման (նույնաբան) հատվածներ, որոնց հեղինակն էր ճանաչվում Մաշտոցի աշակերտ Կորյունը, իսկ Ազաթանգեղոսի Պատմության հեղինակը համարվում էր Կորյունից քաղագրողը։ Իմ նոր ուսումնասիրության մեջ ես ապացուցում էի հակառակը. այդ

նույնաբան հատվածները պատկանում են բուն Ազաթանգեղոսի Պատմության բնագրին, իսկ Կորյունը, օգտվելով Ազաթանգեղոսի Պատմության բնագրից, նշանավոր երկից քաղել է իրեն պետք եղած հատվածները եւ դրանցով բնութագրել Մաշտոցին, Սահակ Պարթևին եւ Գրերի գյուտի հետ առնչվող մյուս երախտավորներին։

Ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը որոշեց այդ աղմկահարույց քննարկման մասնակից դարձնել Մաշտոցի Մատենադարանի եւ մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների հայագետներին ու գրականագետներին, որոնք իրենց ելույթներում միահամուռ մերժեցին իմ բերած բոլոր փաստարկները. ոմանք նույնիսկ դատապարտեցին իմ արտառոց գաղափարները։ Միակ մարդը, որ ընդհանուր ելույթների եւ տարակուսանքների մեջ հաստատական պաշտպանում էր իմ բերած չորս շարք կազմող շուրջ քառասուն փաստարկները, դոկտոր Գեորգ Աբգարյանն էր։

1996 թվին ես պաշտպանեցի դոկտորական ատենախոսություն՝ «V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» թեմայով՝ հեղինակների եւ նրանց երկերի դասակարգումը նոր տեսանկյունից։ Ատենախոսության առաջին մասը նվիրված էր հենց «Կորյուն, թե՛ Ազաթանգեղոս» վիճելի հարցին, իսկ երկրորդ մասը՝ Սովսես Խորենացու «Հայոց Պատմությանը»։ Իմ պաշտոնական ընդդիմախոսներն էին ԳԱ վիցեպրեզիդենտ Գ. Սարգսյանը, Մաշտոցի Մատենադարանից դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ ԵՊՀ-ից դոկտոր Պողոս Խաչատրյանը։ Պաշտպանությունը նշանակված էր նոյեմբերի 1-ին՝ Ժ. 12-ին։ Ես գիտեի, որ դոկտոր Աբգարյանն անկողնային հիվանդ է, ուստի նախորդ օրը՝ երեկոյան, զանգեցի իրեն՝ տեղեկանալու առողջության մասին։ Նա պատասխանեց, որ, ցավոք, չի կարող ներկայանալ պաշտպանությանը, բարձր է գնահատում իմ աշխատանքը եւ ի սրտե հաջողություն մաղթեց ինձ։ Միայն խնդրեց փոխանցել Գրականության ինստիտուտի



տնօրեն ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանին, որ ընդդիմախոսի իր կարծիքը համեմատարկ կարողալ միայն Հին գրականության բաժնի գիտաշխատող դոկտոր Արշալույս Ղազինյանին։ Նրա այս խնդրանքից ես հասկացա, թե նա ինչպիսի հարգանք էր տածում Արշալույս Ղազինյանի նկատմամբ՝ իբրեւ մարդու եւ գիտնականի, եւ նույնիսկ քառորդ դար անց ես նրա ցանկությունը չեմ մոռանում եւ ուզում եմ, որ այն հրապարակվի, որովհետեւ նրա պատկերացման մեջ ճշմարիտ գիտնականը նույնանում էր ազնիվ մարդու գաղափարի հետ։

Իմ պաշտպանությունից հետո «Գիտություն» թերթում 1997 թվի հուլիսին Գ. Աբգարյանը հրապարակեց պաշտոնական ընդդիմախոսի իր ելույթի հիմնական դրույթները, որոնցով նա գնահատում էր իմ կատարած գիտական աշխատանքը՝ 5-րդ դարի հայ մատենագրության հեղինակների եւ երկերի նոր դասակարգման վերաբերյալ (1997, հուլիս, էջ 1—2)։ Այդ հոդվածն արժանացավ «Գիտություն» թերթի խմբագրության եւ փաստորեն՝ Գիտությունների ակադեմիայի

նախագահության բարձր գնահատականին. «Լավագույն հրապարակման մրցանակը տրվում է Գ. Աբգարյանին»՝ Մեծ ուղեծրում. բանասիրության դոկտոր Ալեքսեյ Մուշեղյանն ու նրա աշխարհը՝ հրապարակման համար» (1998, թիվ 1, էջ 2)։

Դոկտոր Գ. Աբգարյանի գնահատականները միշտ դուրս էին ամեն տեսակի ստանդարտից, եւ ես կուզեմայի այստեղ մեջ բերել պաշտոնական ընդդիմախոսի՝ նրա ելույթի եզրափակիչ շատ տարողունակ տողերը. «Գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամության երկարամյա իմ փորձը հնարավորություն է ընձեռում կազմելու պաշտպանված դիսերտացիաների համեմատական տախտակ եւ հիշողության մեջ պահելու գիտության մեջ ներդրված նորությունները։ Ալեքսեյ Մուշեղյանի ատենախոսությունը զալիս է գրավելու երեւելի տեղ իմ հիշողության դաշտում» («Գիտություն», 1997, 1—15 հուլիս, թիվ 13)։

Դոկտոր Գեորգ Աբգարյանը վախճանվեց 1998 թվականի մայիսի 15-ին 78 տարեկան հասակում։ Ստորեւ բերված իմ բանաստեղծությունը այդ տխուր առիթով տպագրվեց Գիտությունների ակադեմիայի «Գիտություն» թերթում 1998 թվի հունիսին №12-ի 4-րդ էջում։

Դոկտոր Գեորգ Աբգարյանին

Մեր կյանքում միայն նա է վեճ մնում, Ով նախընտրում է վեճի թեթևից. Մարդ կա, որ պատվի ետքից է գնում, Մարդ կա՝ պատիվն է գնում ետեւից։

Դու՝ սիրտդ բարի բացած բոլորին, Տքնեցիր անդուլ, ոգու ցնծումով. Դու հավկում էիր մագաղաթներին Հին գրչի նման՝ մոռնով ու ծոմով։

Կռիվ, գերություն, զնդան ու աքսոր Անկարող եղան քո միտքը սանձել, Եվ հեռանալով՝ թողնում ես այսօր Հին մատյաններին իմամբժեք գանձեր։

Ալեքսեյ ՄՈՒՇԵԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Զարեհ Որբունու պատմվածքները



Սկիզբը՝ թիվ 8—10, 12

Քրոջը նկարագրում է հայրենիքից հեռու ապրող հայի դժվարին վիճակը: Նա ապրում էր պանդոկի վերեւի հարկում՝ եռամսյակը մեկ վճարելով կեցության համար: Իսկ այժմ այլևս չէր կարողանում վճարել: Հույսը բարեկամների վրա էր, բայց հպարտությունը չէր կարողանում հաղթահարել, որ նրանցից գումար ուզեր, ամեն անգամ պանդոկից դուրս գալիս նրան

թվում էր՝ պանդոկապետն իր ձեռքին է մայրում: Ամեն անգամ արագ գնում ու արագ դուրս էր գալիս. ամօքը խեղդում էր նրան, հպարտությունը՝ եւս: Ձգվում էր ինքն իրենից, եւ մենակությունը՝ ավելի էր սրում այդ զգացողությունը: Կողքին մեկը չկար, որ կարեկից լիներ ու սրտապնդեր՝ այդ օրերին ընկեր լինելով նրան: Դրա համար էլ հայտնվում էր այդ իմաստասեր Տիտղոսի արձանի մոտ: Իմաստասերի ներկայությունը փոքր-ինչ ամոքում էր, չնայած Մելքոնը չէր հասկանում նրա մունջ խրատները:

Այդ օրն էլ որոշել էր բարեկամներից մեկից գումար խնդրել, բայց նրան ճաշի էին հրավիրել, ու ամեն ինչ հոգս էր ցնդել: Ինչպե՞ս կարող էր հացի սեղանի շուրջ խոսել գումարից, գուցե մտածեին՝ չարաշահում է իրենց վերաբերմունքն ու բարեկամությունը: Վերջին հույսն էլ ջուրն էր ընկել:

Այդ պահին մի աղջիկ նրան ինչ-որ փողոցի տեղ է հարցնում: Աղջիկը երկու ժամ ազատ ժամանակ ուներ: «Մելքոնի սիրտը մեկեմ բացվեցավ աղջկան վրա, գարնան արեւի նման, զայն իր պաշտպանության տակ առնելու համար, մինչեւ ժամը յոթը, միչեւ որ զայն իր ազգականներուն հանձնէր, ավելի իր սիրտը հանդարտացնելու համար, քան թե օգտակար ըլլալու մտքով, քանի որ մոռացած էր իր իսկ անձկությունը, զավառի խաղաղ մեկ անկյունէն եկած աղջկան անձկությունը իրն էր ըրած ու անոր պաշտպանությունը խոստացած իրեն» (2. Որբունի, Վարձու սենյակ, էջ, 317):

Աղջիկը 21 տարեկան էր: Ապրում էր խորթ

մոր եւ հայրիկի հետ: Կարծես Մելքոնը նրան առնում է իր հովանու ներքո՝ մտածելով՝ եթե մեծ չլիներ, կարող էր ամուսնանալ այդ աղջկա հետ. «Ամեն ինչ փոխված էր իր շուրջը, միջոցն ու ժամանակը: Ինքն ալ պզտիկցած էր կարծես, պատանի եղած, պատանի մը, որ մայրական զգվածներու կարոտն ունի: Ձրկված մանկության մը հիշատակ արթնցած էր անոր մեջ: Մտքով փոխադրված էր երկիր, մինչեւ 1905-ի ջարդերը, որ զինքը որբացուցած էին: Չարքաշ կյանք մը եղած էր իր կյանքը, ապրելու, սովորելու համար: Սովորելու ծարավը շատ բաներէ գրկած էր զինքը ու երբ կրցած էր կյանքին մեջ տեղ շինել իրեն, հանկարծ ծերացած գտած էր ինքզինքը: Այդ զգացումին համաձայն նկարագիրը շինված, այսինքն՝ խոնարհ, համակերպած մարդ մը եղած էր, ինչ որ ուրիշներուն ըսել կուտար թէ՝ «Մելքոն բարի մարդ էր»» (նույն տեղում, էջ 321):

Աղջիկն էլ է նկատում եւ հասկանում՝ ինչքան բարի մարդ է նա: Մելքոնը շփոթվում է: Մելքոնը հարցնում է ժամեթին՝ արդյոք կամուսնանար իր հետ, եթե ինքը երիտասարդ լիներ: Բայց ծեր էր՝ հիսուն տարեկան: Ժամեթը հաստատում է նրա ծեր լինելու համազանցը: Նա որոշում է ժամեթի համար սենյակ վարձել պանդոկում, որ իրեն մոտ լինի: Քանի որ չէր կարող ամուսնանալ իր հետ, մտածում է ծանոթ ինչ-որ տղայի գտնել, որ աղջկան չհեռացնի իրենից: Հասնում է աղջա մեկնելու օրը: Նա մտահոգվում է, որ նրա մեկնելով՝ իր սենյակն անապատի կվերածվեր: Սկսում է լաց լինել, իսկ աղջիկը պատասխանում է. «Ո՛հ, ես չեմ սիրեր երիտասարդ տղաքը» (նույն տեղում, էջ 334): Նա չի հավատում աղջկա ասածներին: Աղջիկը մնում է իր մոտ: Նա սրբում

է Մելքոնի արցունքները, որոնք երջանկության արցունքներ էին:

Ի տարբերություն Շահնուրի հերոսների՝ Մելքոնն ու ժամեթը կապվում են անկեղծ սիրով: Մելքոնը միայնակ էր օտար հողում, ժամեթը դառնում է նրա համար ապավեն, ուրախության աղբյուր, բայց, այնուամենայնիվ, հայ մարդն իր կյանքը կապում է օտար աղջկա հետ:

Հեղինակն իր պատմվածքով այն գաղափարն է առաջադրում, որ ազգային արժեքների պահպանման ամենակարեւոր ուղիներից մեկը սերն է, ամուսնությունը, ընտանիքը: Օտար արժեքներ կրող մարդու հետ ամուսնությունը բերում է այդ արժեքների ընդունման ու հաղորդակցման, արդյունքում՝ ազգային պատմությունից շեղման: Անձնական ապրումների բովանդակում է հայրենիքի նկատմամբ սերը: Հայրենիքի նկատմամբ սերն անցնում է երկրորդական պլան:

Ազգային պատմությունն առնչվում է անհատի կյանքին, գործունեությանը, անգամ ապրումներին ու զգացողություններին: Դրանք փոխակապակցված իրողություններ են: Ազգային պատմության, հայրենիքի նկատմամբ սիրո առաջին օղակն էլ ընտանիքն է: Եթե այն կազմված ու կառուցված չէ ազգային արժեքների հիման վրա, ապա ենթակա է օտարածին ազդեցությունների ու խաբխուրումների, բարոյական արժեքների անվերադարձ կորստի:

Որբունու պատմվածքի հերոս Մելքոնի, Շահնուրի վեպի հերոս Պետրոսի անցած ճանապարհը համընդհանուր է. այդպես շարժվում է մի ամբողջ սերունդ:

→ էջ 7, 8

Վաթսուհականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 4


«Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի էջերում բանավեճին մասնակցեց նաեւ Սերգեյ Դարոնյանը («Ավանդներ եւ արդիականություն», 1968, թիվ 12):

Հիմնական սկզբունքային հարցերի պարզաբանման առումով հատկապես առանձնանում են Պետրոսյանի եւ Մաթեոսյանի հոդվածները:

Պետրոսյանի հոդվածների հիմնական կողմնորոշումն այն էր, որ պետք է տեսնել, նկատել եւ գեղարվեստական իրողություն դարձնել մեր կյանքին բնորոշ բոլոր այն առանձնահատկությունները, որոնց համադրումից ձեւավորվում է այսօրվա իրականությունը: Հենց այդ ժամանակակից կյանքին բնորոշ մոր նյութի, մոր մարդու պատկերման դիրքերից էլ նա առաջ է քաշում այն միտքը, որ պետք է գրականության մեջ տեղ տալ նաեւ այսօրվա կյանքի ստեղծած կերպարներին: «Գյուղական կոլորիտը, ավանդական կերպարները հաստատուն տեղ ունեն մեր գրականության մեջ, քանի որ նրանք կան կյանքում, բայց հավասար իրավունքով տեղ պիտի գտնեն նաեւ այն մոր կերպարները, որոնք գուցե եւ նման չեն առաջիններին, սակայն մուկապես մեր օրերի եւ հարաբերությունների ծնունդ են եւ ոչ թե դեսանտներ՝ արտասահմանյան գրքերից մեզ մոտ իջեցրած (Վ. Պետրոսյան, «Հավասարում՝ բազմաթիվ անհայտներով», 1977, էջ 339—340),— գրում է նա եւ ապա լրացնելով իրեն՝ մեկ անգամ եւս հաստատում դիրքորոշումը:— Իրականում ես ոչ թե մտահոգված էի միջին ազգային կերպար ստեղծելու գաղափարով, այլ անհնարին էի համարում այն, եւ, քանի որ դա իրոք անհնարին է, մեր այսօրվա գրականության մեջ տեղ էի պահանջում նաեւ հայ ֆիզիկոս, նկարիչ, ավելի լայն առումով՝ մտավորական հերոսի համար» (ԳԾ, 1968, թիվ 44):

Պետրոսյանն իր հոդվածներում ընդգծում է այն միտքը, որ

«պետք է հասկանալ մեր ժամանակի, մոր սերնդի զարգացման պրոցեսի բարդությունները, խորամուկի լինել, մտածել այդ սերնդի մասին <...>: Սա, իհարկե, դժվար է: Ավելի հեշտ է իրար հակադրել մոռարարական եւ ավանդական, մոդեռնիստական եւ ազգային հնչյուն ֆրագմենտը» (Վ. Պետրոսյան, «Հավասարում՝ բազմաթիվ անհայտներով», էջ 344): Նա առաջ է քաշում կյանքն իր հակասություններով ու բարդություններով պատկերելու հարցը: «Ցավն այն է, որ մեր գրողների շատ գործերում բարդությունն էլ պարզեցվում է, կրճատվում եւ հավասարման շատ անհայտներ, եւ այսօրվա հայ մարդու ազգային նկարագիրը թալանվում է, աղքատացվում» (նույն տեղում, էջ 348—349): Իհարկե, սա չի նշանակում, թե նյութի յուրացումն ինքնին արդեն նվաճում է. ո՛հ, այդ նյութը, ինչպես նշում է Պետրոսյանը, շատ դեպքերում մնում է «...առաջմ պակաս խորությամբ հայտնագործված» (ԳԾ, 1968, թիվ 44), բայց դա չի նշանակում, թե պետք է փոխել հայացքի ուղղությունը: Նյութի պակաս խորությամբ հայտնագործված լինելն ունի տարբեր պատճառներ, անհրաժեշտ է հաշվի առնել ստեղծագործական անհատականությունների օժտվածության, ավանդույթների առկայության, կյանքն իր բարդությամբ եւ բազմաշերտությամբ ճանաչելու եւ շատ այլ հարցեր: Արդիականությունն ստեղծում է իր խնդիրները, առաջ մղում տվյալ ժամանակաշրջանին հատկանշական գրական նյութ, հերոսի տեսակ, որի առանձնահատուկ կողմերը նկատել ու պատկերել է անհրաժեշտ: Միայն ժամանակի խորություններն ու հոգե-



վիճակները, մտածողության եղանակները իր մեջ կրող հերոսի հայտնաբերմամբ կարելի է գտնել առանձնահատկությունների այն հիմնական ամբողջությունը, ստեղծել այն համակարգը, ինչը տվյալ ժամանակը տարբերում է նախորդից, տվյալ ժամանակի մարդուն (հերոսին)՝ նախորդ ժամանակներից: Այս առումով միանգամայն նպատակային էին Պետրոսյանի հոդվածները, որոնց գլխավոր միտումն ուղղված էր մոր նյութի, կյանքն իր ավանդական եւ արդիական սահմանների մեջ լիարժեքորեն յուրացնելու ցանկությանը, կյանքի զարգացման ու ժամանակի մակարդակի թելադրանքով «արբազրելու հայ մարդու ազգային կերպարի ավանդական պատկերացումը» (Վ. Պետրոսյան, «Հավասարում՝ բազմաթիվ անհայտներով», էջ 335):

Սակայն ժամանակ, ժամանակակից նյութ, ժամանակի հերոս հարցադրումների ընդգրկումը շատ հարուստ է ու բազմաշերտ: Պետրոսյանը որոնում էր արդիականության մոր դրսեւորումները. դա ժամանակը հայտնաբերելու եղանակներից մեկն էր: Ժամանակը կարելի էր հայտնաբերել նաեւ այլ ձևերով, ասեմք՝ ծանոթ ու ավանդական նյութի մորոքի մեկնաբա-

նությամբ եւ ավանդական նյութի մեջ ժամանակի համար կարեւորություն ունեցող հարցադրումների խորացմամբ:

1960—1970-ականների հայ հանրային կյանքն իր քաղաքով ու գյուղով, կենցաղով ու բարոյականությամբ, սովորույթներով ու մորամոծություններով շատ բարդ ու համադրական, նաեւ ծայրահեղ զարգացումներով հարուստ ճյուղավորվող շղթա է: Գրողի համար այդ ամենը կա այնքանով, որքանով նա՝ որպես ստեղծագործող, ունի իր հայեցակետը, իր դիրքորոշումը: Իսկ այդ ամենն էլ ձեւավորում են նրա նախասիրությունները, գեղարվեստական մտածողությունն ու ստեղծում նրա, միմիայն նրա աշխարհը: Նյութի կարեւորությունը, ասելիքի նպատակաուղղվածությունը, գեղարվեստական մտածողության մակարդակն արժեքավորվում են նախեւառաջ գրողի ստեղծած գեղարվեստական աշխարհի գոյությամբ (ինչն ամբողջանում է նրա ստեղծած հերոսներով, առաջ քաշած հարցադրումներով, օգտագործած նյութով, բանեցրած ոճով ու մտածողությամբ), ինչը նրա՝ որպես գրողի գոյության գրավականն է:

Միջանկյալ մշենք, որ գրական հերոսին առնչվող այս հարցերն արձակագիրների բանավեճից առաջ ճշտել էին բանաստեղծները: Խոսքը 1965—1966 թթ. «հանուն» եւ «ընդդեմ» «ռեալիզմի նախահիմքերի» ընթացող բանավեճի եւ այն շրջանակող ելույթների մասին է, ինչին այլ առիթներով անդրադարձել են ոչ մեկ անգամ: Սա հիշեցնում են, որպեսզի ավելացնեն, որ Վարդգես Պետրոսյանի պահանջներն արդեն արտահայտել եւ մույն դիրքերից ձեւակերպել էին Պետրոսյ Սեւակն ու Գեւորգ Եմինը: Խոսքը առաջին հերթին վերաբերում է մտավորական հերոսի պատկերման անհրաժեշտությանը:

Ժամանակակից կյանքի գեղարվեստական յուրացման հարցում իր յուրահատուկ դիրքորոշումն ունի Հրանտ Մաթեոսյանը:

→ էջ 8

ՀԱՅ ԴԵՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԿԵՍԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ԴԵՍՈՒՆՔԱՐԱՆԸ

← ٤٢ ٣

Հնագույն ֆոնդերից է դերասան, թատերագիր, բեմադրիչ, արեւելահայ թատրոնի հիմնադիրներից Գեւորգ Չմշկյանի ֆոնդը: Արժեքավոր են նաեւ հայ բեմի մյուս պսակավորների՝ Պ. Աղանյանի, Սիրանուշի, Հ. Աբեյանի, Ա. Ոսկանյանի, Վ. Վաղարշյանի, Վ. Փափազյանի, անվանի բեմադրիչներ Ա. Գուկասյանի, Ա. Բուրջալյանի, Լ. Քալանթարի եւ այլոց ֆոնդերը:

Այստեղ են պահպանվում մաե տարբեր ժամանակներում ու վայրերում հանդես եկած հայ թատերախմբերի ու թատրոնների, ինչպես մաե զանազան մշակութային հիմնարկների ֆոնդեր, ձեռագիր պիեսներ, թատերական հուշերի ու մատենագիտական նյութերի հավաքածուներ: Ֆոնդային այս բաժնին առանձնակի շուք են հաղորդում եւ ըստ հարկի համրությամբ ներկայացվում դերասանների բեմական զգեստներն ու իրերը: Թանկարժեք մատուցներն ու հատկապես համճարել Ադամյան—Յամբետի զգեստը, որով ևս բեմից կախարդել է շատերին եւ սաեւ հայտնի՝ «Լինել, թե չլինել» մախադասությունը, մաե համճարել Ադամյան—Օթելլոյի, համճարել Ադամյան — Ուրիել Ակոստայի զգեստները: Պետոոս Ադամյանի ֆոնդում պահպանվում են մաե նրա ստեղծած եւ իր, համճարել դերասան լինելուց բացի, մեծատաղանդ նկարիչ լինելը վկայող ընտիր գեղանկարներն ու գծանկարները, ինչպես մաե նրան պատկանած մի շարք խոշոր հեղինակների նկարչական գործեր: Ուշագրավ բեմական իրեր, գարդեր ու կերպարվեստի գործեր կան մաե այլ դերասան-դերասանուհիների ֆոնդերում:


Թատերական ֆոնդերից զատ՝ թանգարան են մուտք գործել եւ շուրջ 57 000 նյութերի ընդգրկմամբ առանձին ենթաբաժին կազմել նաեւ թատերական բեմադրությունների ու զգեստների էսքիզներ, մակետներ, բեմական մշանավոր գործիչների դիմանկարներ։

կարներ, դիմաքանդակներ, մահադիմակներ, ամենատարբեր բնույթի հազարավոր լուսանկարներ: Այստեղ առկա են նաեւ հայ թատրոնի հնագույն շրջանին առնչվող բրոնզեդարյա արձանիկներ:

Այս հարուստ նյութի հիման վրա ըստ ամենայնի լույս է սփռվում հատկապես 19–20-րդ դարերի հայ թատրոնի անցած ուղու, նրա հարուստ միջազգային առնչությունների վրա:

Հարուստ են նաև երաժշտական՝ մոտ 221 ֆոնդերը, որ ընդգրկում են շուրջ 170 000 թանգարանային առարկա: Այստեղ ներառված են անհատական եւ երաժշտական տարբեր կազմակերպությունների ու խմբերի ֆոնդեր, ինչպես նաև մի շարք հավաքածուներ: ԳՍԹ-ի երաժշտական բաժինը հիմնականում ընդգրկում է 17-րդ դարից մինչև մեր օրերի թանգարանային առարկաներ. ֆոնդերում պահպանվում են ոչ միայն այս բնագավառում հանդես եկած գործիչների՝ կոմպոզիտորների ու երաժշտագետների, խմբավարների ու դիրիժորների, երգիչների ու երաժիշտ-կատարողների անհատական արխիվները, այլև կրթական ու գիտական հաստատությունների, կազմակերպությունների արխիվային նյութերը: Մեծագույն մասը կազմում են հայ կոմպոզիտորների, խմբավարների, երաժշտագետների, երգիչների, երաժիշտ-կատարողների անհատական ֆոնդերը: Արժեքավորներից է հայկական օպերային արվեստի հիմնադիր Տիգրան Չուխաճյանի ֆոնդը. այստեղ են կոմպոզիտորի հիմնական գործերի ձեռագիր նոտաներ (պարտիտուրներ, կլավիրներ):

Մեն արժեք ունեն մատ 19–20-րդ դարերի խոշորագույն կոմպոզիտորներ Ք. Կարա-Մուրզայի, Մ. Ելմալյանի, Կոմիտասի, Ն. Գալանդեղյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի եւ այլոց ֆոնդերը: Դրանք մեն թե՛ ծավալով եւ թե՛ արժեքով առանձնանում են մենեմ Կոմիտասի ժառանգությունը, որ ընդգրկում է հայ-




կական եւ եվրոպական նոտագրությամբ ինքնագրեր, հայկական ժողովրդական եւ հոգեւոր երգերի գրառումներ, ամենատարբեր ժանրերի ստեղծագործություններ, ուսումնասիրություններ, ձեռնարկներ, բանաստեղծություններ, գրած եւ ստացած մամակներ, փաստաթղթեր, վկայականներ, լուսանկարներ, երաժշտական գործիքներ: Դրանց մի մասը ներկայացված է թանգարանի մշտական ցուցադրության մեջ եւ Կոմիտասի անվան սրահում: Հայ եւ համաշխարհային երաժշտարվեստի ամբողջական հանճարին վերաբերող բազմաթիվ նյութեր կան նաեւ այլ ֆոնդերում, հատկապես նրա մտերիմ բարեխմուհի, երգչուհի, երաժշտական գործիչ Մարգարիտ Բաբայանի ֆոնդում: Ինչպես Կոմիտասը, այնպես էլ Ս. Բաբայանը լայն ստեղծագործական կապեր է ունեցել ժամանակի մի շարք մշամավոր երաժիշտների հետ. նրան գրված մամակների հեղինակներից են Մ. Ռավելը, Կ. Դեբյուսին, Պ. Վիարդոն, Լ. Լալուան, Ռ. Դյալիսը եւ աշխարհահռչակ այլ դեմքեր: Հիշվեցին, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի մշտական ցու-

ցաղրությունում տեղ գտած թանգարանա-
յին բազմաթիվ առարկաներ տրամադրվե-
ն Գրականության եւ արվեստի թանգարա-
նի՝ Կոմիտասի ֆոնդից:

Օտարագիի երաժշտական գործիչների միությունը նյութերով շատ ավելի առատ են երաժշտագետ Կասիկ Կորգանովի (Բարսեղ Դորդանյան) մեծածավալ ֆոնդը եւ հատկապես՝ հավաքածուն։ Այստեղ կան 18–20-րդ դարերում գրված գերմաներեն, անգլերեն, իտալերեն եւ ֆրանսերեն բազմաթիվ նամակներ (հիմնականում՝ բնագիր), որոնց հեղինակներից են հռչակավոր արվեստագետներ ու արվեստաբաններ՝ Ֆորկելը, Ֆետիսը, Հանսլիկը, Մասսեն, Շրնդլերը եւ այլք։ Այստեղ է նաեւ մեծն Սոցարտի նամակների՝ գրված 1778 թ. Փարիզում՝ մոր մահվան օրը։ Երաժշտական գործիչներից զատ՝ Կորգանովի հավաքածուում առկա են նաեւ բացառիկ այլ նյութեր՝ Լյուդովիկոս 14-րդի, Նապոլեոն Բոնապարտի, պարսից Ֆաթալի շահի, մի շարք ռուս գահակալների, կոմսերի, իշխանների ու զորավարների ինքնագիր նամակներ ու գրություններ։ ➔ էջ 8

Մեր գեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ



Գործ՝ Մ. Սարյանի

Սկիզբը՝ թիվ 9–10, 12

Լուսելով Շերվինսկու թարգմանություններում առկա որոշակի բացթողումների մասին՝ հարկ է անդրադառնալ նաեւ Սայաթ-Նովայի որոշ ստեղծագործությունների թարգմանություններին: Այս կապակցությամբ Շերվինսկին գրում է. «Սայաթ-Նովայի բանաստեղծությունն ինձ համար պետական վարպետության փորձնաքար դարձավ: Սակայն կարող եմ նշել, որ վերջինիս ստեղծագործությունը ինչպես իմ, այնպես էլ այլոց թարգմանություններում այդպես էլ չգտավ բնագրին հավասար դրսեւորում» (էջ 201): Եվ իսկապես, պետք է նշել, որ Շերվինսկու՝ Սայաթ-Նովայի գրական ժառանգությունից կատարած թարգմանությունները նկատելիորեն զիջում են բնագրին: Այդ առումով բերեմք մի օրինակ «Աշխարհըս մէ փանջարաւ է» բանաստեղծությունից.

Աշխարհըս միզ մընալու է, քանի նըստինք
գօղ ու սափին.

Հուն կաթնակիր՝ Աթամի զանթ, նա լաթ ըլի
էդ քու բափին.

Հանփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում
խալխի գափին,

Դոստիրըս դուշման ին դառի. եադիրումէն
բեգարիլ իմ:

(Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, 1987, էջ 78)

Բանաստեղծության այս հատվածը Շեր-

Վիսակին թարգմանել է հետևյալ կերպ.
 Мир не пребудет век для нас,— пусть
 живем, пока мы можем

Адама нечестивый сын, проклятье на

твои дела!
Нет сил терпеть насмешек злых, душа

Врагами стали мне друзья, чужой народ

мне стал не мил.
(С. Шервинский, 624. ш21., 49 66)

Այս քառատողի վերջին հատվածում Շեր-վինսկին գրում է «чужой народ мне стал не мил», մինչդեռ այս արտահայտությունը բացակայում է բնագրում. հեղինակն ուղղակի գրում է. «եղաիրունն բեզարիլ իմ», ինչը մշակաման է «չարականերից ծանծարացել են» եւ ամենեւին չի խոսում օտար ժողովրդի մասին:

Բերենք մեկ այլ բանաստեղծության
թարգմանության օրինակ.

Յիս քու ղիմեթըն չիմ գիղի՝
Զավահիր քարի նրման իս.

Տեսնողին Մէջլուն կու շինիս՝
Լէյլու դիդարի նրման իս:

Աշխարհումըս իմըն դո՛ւն իս,

Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս,
Պըռռոշնիրըդ նաբաթ ունիս՝

Ղանդ ու շաքարի նըման իս:

Դադա պիտի՝ թարիփոյ ասե,

Ակռեքրդ եաղութ-ալմաս է,
Ռանգրդ փրռանգի ատլաս է՝
Զար-դալամ քարի նըման իս:

Մագիրորդ նըման ռեհանի,
Դուն ուրիշ խիալ մի անի,
Ռահմ արա, հոգիս մի հանի.
Մուրվաթով եարի նըման իս:
Վո՛ւնց դիմանամ էս չափ չարին
Աչքէնէ կաթուն է արին.

Սայաթ-Նովա, նազլու ետրին
Գընաժ մոքարի մըման իս:
(Սայաթ-Նովա, նշվ. աշխ., էջ 96)

Նախելառաջ մշենք, որ Շերվինսկին
կրկին անգամ անթարզման է թողնում որոշ
բառեր, օրինակ՝ սույն բանաստեղծությունը
թարգմանված է հետևյալ կերպ.

С бесценным камнем джаваир,
 клянусь, красота сходна ты!
Ты всех в Меджнунов обратишь, сама с
 Лейлою сходна ты.

Одна моя на свете ты,
Но нет в жестокой доброты.
Набатом губы залиты,
Вся-сахар белизною ты.

Тут нужен мастер, нужен **саз**:
Пусть воспоет зубов алмаз.
Твоя щека—**пранги**-атлас,
И вся с парчою сходна ты.

Рехана волос твоей нежней,—
Ты о других вздыхать не смей.
О, не терзай души моей.—
Иль с **пери** злою сходна ты?

Беда для горькой головы!
Струится кровь из глаз, увы...
Увы, судьба Саят-Новы,—
Теперь с рабою сходна ты.
(С. Шервинский, 1924. 122, 123, 124)

Բանաստեղծության թարգմանական այս տարբերակում հանդիպում ենք «джаваир», «набат», «саз», «прангитлас», «рехан», «пери» տառադարձված բառերի, որոնք կարող են որոշակիորեն դժվարացնել տեքստի ընկալումը ռուս ընթերցողի համար: Սակայն թարգմանական տարբերակն ունի մի թերություն եւս. բնագիրը կազմված է 5 քառատողից, իսկ թարգմանիչը խախտել է բնագրային կառուցվածքը՝ կազմելով 1 երկտող եւ 4 քառատող տուն, ինչը հանգեցնում է բանաստեղծության տաղաչափական ներդաշնակության եւ հնչեղության խախմանմանը:

Այնուամենայնիվ՝ պետք է նշել, որ Շեր-վինսկու թարգմանական ժառանգության մեջ առավել շատ են հաջողված թարգմանությունները, այդպիսին կարող ենք համարել նաև խաչատուր Աբովյանի ստեղծագործություններից արված թարգմանությունները: Ինչպես արդեն նշվել է, Շերվինսկին թարգմանել է խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը, բայց հարկ է նշել, որ նա թարգմանել է նաև Աբովյանի չափածո ստեղծագործությունները: Առանձնանուն են, օրինակ, Աբովյանի, այդպես կոչված, բայաթները: «Բայաթներ» ընդհանուր խորագրի տակ Աբովյանն ստեղծել է եղանակավոր քառյակների մի ամբողջ շարք: Այդ ստեղծագործությունների հիմնական թեման սերն է՝ սերտորեն կապված ժողովրդական կյանքի բազմազան երևույթների հետ: Աբովյանը գրել է իր ժամանակի հասարակական-քաղաքական տրամադրություններն արտահայտող քառյակներ, որոնք հիմնական բովանդակությունը աշխարհից, մարդկանցից, սիրուց վիրավորված եւ կյանքի բազմաթիվ հարվածներից խոշտանգված մարդու անձնական եւ հասարակական տվայտամբներն են: Սակայն այդ բայաթների հիմքում միեւնույն ժամանակ ընկած է բողոքող, հուզված եւ վշտացող անհատի ջերմ հոգին: ➤ էջ 7

Զարեհ Որբունու պարմվածքները

← էջ 5

Օտար երկրներում հայտնված բազմաթիվ երիտասարդներ, ապրելով ու կրթություն ստանալով օտար հողում, այնտեղ էլ ընտանիք են կազմում: Տեղի է ունենում ազգային արժեքների կորուստ, ազգային լեզվի, պատմության մոռացում: Գրողների առաջ քաշած այս մտահոգությունն առկա է նաեւ մեր օրերում:

«Երեւանցիին լացը» պատմվածքի գործողությունները ծավալվում են Թուրքիայում նույն այն ժամանակահատվածում, երբ ջարդարար ուժերը հաշվեհարդար էին տեսնում հայերի հետ: Անանուն հերոսն ինչ-որ սրճարանում հանդիպում է իր հայրենակիցներից մեկին, որը հագել էր ցնցոտիներ, չնայած զգացվում էր, որ կիրք անձնավորություն է: «Փոթորկէն ազատածի մը երեւոյթը ունէր, բայց դեռ կլողար խաղացած ծովուն վրայ աչքերը ուղղած հեռաւոր ցամաքին» (2. Որբունի, *Անճրետտ օրեր, Փարիզ, 1958, էջ 186*): Իսկ սրճարանը նրա նման անտուն մարդկանց համար մի հանդիպավայր էր, որտեղ հայրենիքից հեռու գտնվողներն ունենում էին մարդկային շերտության պատրանքը: Նա սկսում է անձանիքի հարցնել հայրենիքից, Երեւանից, երգում է հայրենասիրական երգ, խմում է Երեւանի կենացը: Իսկ երբ տեղեկանում է, որ հայրենիքում արյան գետեր են հեղեղվում, արցունքներն սկսում են հոսել աչքերից: Իր ժողովուրդը երգել է աշխատանքի մեջ, կերգի նաեւ ցավի ու տառապանքի ոլորաններում, մի օր, անշուշտ, կկարողանա դուրս գալ այդ վիճակից: Թուրքիայում ապրելով, կեցության թուղթ ունենալով՝ այդ մարդը չէր կարողանում աշխատանք գտնել, քանի որ հայ էր: Մյուս կողմից էլ այրվում էր հայրենիքի սիրով ու կարոտով, երազում այնտեղ վերադառնալու մասին: Եթե մյուս-



ների նման իր ազգանունը փոխած լինել, գուցէ ինչ-որ հաջողություն ունենար թշնամու երկրում:

«Վարձու սենյակ», «Սեւ մազեր», «Գործագործի մը», «Հանուն տառապանքին» եւ շատ ուրիշ պատմվածքներում ու մի շարք վեպերում Որբունին իր հերոսներին կերպավորում է գլխավորապես նրանց ներքին ապրումների ընթացքի պատկերմամբ, շատ հաճախ ինքնազննում, ինքնավերլուծության եղանակով՝ պատմելով առաջին դեմքով, հերոսի անունից: Որբունու ստեղծագործությունը որքան էլ ժամանակակից կապիտալի աշխարհում հետապնդեր մարդկային իրավունքների ոտնահարման քննադատության նպատակ, հալածվածներ-

ի նկատմամբ (ինչ ցեղի ու գույնի էլ պատկանելիս լինեն) սեր եւ կարեկցություն, այն առաջին հերթին Սփյուռքի հայության ճակատագրի քննությունն էր, նրանց ազգային, սոցիալական կյանքն էր պատկերում: Այդ նրանք՝ հայ գաղթականներն էին առաջին հերթին «հալածվածները», իրենց հողից, տնից, բարքերից ու լեզվից հալածված-քշվածները, որոնց բաժին էր հասել նոր աշխարհի՝ իրենց համար անսովոր քաղաք: Ու այդ քաղաքի մեջ հայ ընտանիքների ու անհատների ծանր կյանքի ու հոգեկան տառապանքների, հին ու նոր ըմբռնումների, ազգակիցների ու օտարների հետ հարաբերակցության նկարագրություն-վերլուծությամբ Որբունին նպատակ ուներ իր հայրենակիցներին ներշնչելու ոգու արիություն՝ դիմադիր կանգնելու դժվարություններին՝ մարդ ու հայ մնալու համար:

Ստեղծագործական կյանքի շուրջ վաթսուն տարվա ընթացքում Որբունին ապրեց Սփյուռքի հայության կյանքի հոգսերով, ծառայեց նրա գոյատեւման պայքարին՝ իր գեղարվեստական գործերով ու հրապարակախոսական հոդվածներով, հայրենասիրական ելույթներով, առաջադիմական գաղափարախոսությամբ: Մասնավորեցնելով խոսքը հայության ճակատագրի ու նրա առաջընթացի մասին՝ գրում է. «Խորհրդային Միությունը մեր փոքրիկ երկիրը իր ծոցին մեջ առնելով ապահոված է ամոր գոյությունը եւ մեր տեղը վաղվան ընդհանրական հասարակության մեջ՝ ուր մարդկությունը իր մարդկայնության հանգրվանին մեջ պիտի ապրի» (4. *Գաղթից, Սփյուռքահայ գրականություն, Երեւան, 2016, էջ 85*):

«Գործագործի մը» պատմածքը պատկերում է Փարիզում ապրող նկարիչ Աշոտ Նշանյանի դժվարին ու չարքաշ առօրյան:

Քայլում էր Փարիզի փողոցներում, զգայաբանները սառել էին, այլեւ ոչինչ չէր զգում: Ամիսներ տեւող ծոմապահությունն ու անքնությունը հալումաշ էին արել նրան: Պողոտան աչքին խրախճանքի գնացող նավի էր նմանվում: Ընկել էր երազանքների ու հուսախաբությունների գիրկը: Միակ սփոփանքը մնում էր հայրենիքի հետ կապված հիշողությունը. «...իր հայրենի գյուղը, ուր իջնող ճամփաները հովիտ կամ անտառ կտանեին... փռվիլ կանաչին վրա, երկնքի կապույտ կամարին տակ, քնանալ... Քիչ մը մղձավանջային կդառնար քնանալու հարկադրանքը: Կարծես այրող գոլորշիներ աչքերուն կոպերը ներս կբաշեին: Ինքն իր մեջ իյնալու պատրանքներ կունենար» (2. *Որբունի, Եւ եղեւ մարդ, էջ 268*):

Փողոցում մուրացիկը պարզում է ձեռքը՝ նրանից ողորմություն խնդրելու: Ինչ կարող էր նրան տալ Աշոտ Նշանյանը, երբ ինքն էլ նրա կարգավիճակում էր, անգամ գործազրկության թռչակ չէր ստանում: Միակ ունեցվածքը տվյալ պահին ձեռքի տակ եղած գիրքն էր: Նրա բոլոր երազանքները միայն երեք բայերի շուրջ էին պտտվում՝ պառկել, քնել եւ հորանցել. «Ամիսներ է ի վեր Աշոտ ենթարկված էր ներքին մեմախոսության մը եւ դանդաղ մխացումով իր ընթոստությունը մարեր էր: Պառկել... իր միակ փափագը: Ուրիշ ոչինչ գոյություն ուներ իր համար: Երկու-երեք ժամ «ուտել» անկարելի կըմեր քնանալու ցանկությունը: Հիմա կուշտ էր: Եվ շատ կուշտ: «Հերմ անիծած»: Սեւ-Միշելի պողոտային սկիզբը նստարանի մը վրա բազմեցավ» (նույն տեղում, էջ 270):

Գրողը նկարագրում է հայրենիքից հեռու գտնվող հայի աստանդական վիճակը: Օտար ափերում դեգերող հայ արվեստագետը ոչ միայն աշխատանք չունեւ, այլեւ որեւէ նպաստ չէր ստանում՝ գոյությունը պաշտպանելու համար: ➔ էջ 8

Սերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ

← էջ 6

Այս փոքրիկ, բայց իմաստալից ստեղծագործությունները գերել են նաեւ Սերգեյ Շերվինսկուն, որը ռուս ընթերցողին ծանոթացրել է հայազգի հեղինակի մտածումներին: Բերենք խաչատուր Աբովյանի բայաթիներից մի օրինակ.

*Տար էր հավին, այ ուրուր,
Աշխարհս դանակ ա ու սուր
Չոր մարդի թուրն ա կտրում
Խեղճն ուր կորչի, ախ ուր, ուր...*
(Խ. Աբովյան, Երկեր, Երեւան, 1948, էջ 100)

Այս քառյակում առկա է բոլոր՝ սոցիալական անհավասարության դեմ, եւ առհասարակ պետք է մշել, որ Աբովյանի քառյակները՝ իրենց փիլիսոփայական ընդհանրացումներով, մարդկանց հասարակական-անհատական փոխհարաբերությունների մասին նոր ավանդ են մեր գրականության մեջ: Շերվինսկին վերը մշված հատվածը թարգմանում է հետևյալ կերպ.

*Эй коршун, птицу умчи!
Весь мир — ножи да мечи.
Меч сильного всех сразит...
А слабый — терпи, молчи...*
(С. Шервинский, մշվ. աշխ., էջ 116)

Հասարակական բովանդակության հետ, սակայն, Աբովյանը նաեւ իր քառյակների միջոցով գրականությունը հարստացնում է բնության երեւույթների եւ մարդկային զգացմունքների բազմազանությունը բացահայտող պատկերներով ու համեմատություններով: Այդպես, օրինակ, իր բայաթիներից մեկում Աբովյանը գրում է.

*Դաշտի ծաղկի ռանգեռանգ
Մեզ նման կարծ է օրն ու կյանք:
Ծաղկին՝ որ հոտ չունենա,
Էլ ի՞նչ օգուտ, ռանգ է, ռանգ...*
(Խ. Աբովյան, Բայաթիներ, Երեւան, 1941, էջ 9):

Շերվինսկին թարգմանում է.

*Жизнь полевого цветка,
Как жизнь людей, коротка.
Коль запаха нет в цветке,—
Что в нем? — Лишь цвет лепестка!*
(С. Шервинский, մշվ. աշխ., էջ 115)

Այս քառյակում Աբովյանը գեղեցիկ համեմատություն է կատարել՝ նույնացնելով ծաղկին մարդկային անցավոր կյանքի հետ, սակայն ուշագրավ է նաեւ թարգմանական տարբերակը: Տեսաբան Անդրեյ Ֆյոդորովը մշում է. «Թարգմանել մշանակում է մեկ լեզվի միջոցներով ճշգրիտ եւ ամբողջականորեն վերարտադրել այն, ինչն ավելի վաղ արդեն ասվել է մեկ այլ լեզվով» (А. Федоров, *Основы общей теории перевода, Москва, 1983, էջ 10*): Ճշգրիտ եւ ամբողջականորեն արտահայտել ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե բառացի թարգմանությունը, այլեւ բնագրի գաղափարի եւ ոճի փոխադրումը, եւ ընթերցելով վերը մշված քառյակի թարգմանությունը՝ կարող ենք ասել, որ թարգմանիչը ոչ միայն փոխադրել է ծաղկի ձեւը, այլեւ՝ նրա գույնն ու բույրը: Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ նոր գրականության պատմության շրջադարձային կետը դարձավ: Այն նորություն էր իր լեզվով, ոճով, կերպարներով ու արածածած գաղափարներով: Կենդանի հերոսների եւ քնարական խորհրդածությունների միջոցով Աբովյանը ցույց է տվել, «թե մենք ի՞նչ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ինչի՞ համար ենք եկել աշխարհ, երկրում ի՞նչ պետք է անենք», եւ ինչպես նաեւ մատնանշել նոր գրականության գլխավոր թեմաները՝ հայրենասիրություն, սեր եւ բարեկամություն: Այժմ դժվար է պատկերացնել, թե ինչ դրության մեջ էր հայտնվել հայ ժողովուրդը այն տարիներին: Պարսից իշխանության ներքո ապրելը կնշանակեր մեկ րոպե անգամ հանգիստ չունենալ եւ մտածելով այն արյան մասին, որ լցրել էր հայ քաղաքներն ու գյուղերը՝ պարզ է դառնում, թե որ-



քան պետք է ցնծար հայ ժողովուրդը, երբ ստացավ ռուս գրքերի ժամանման լուրը: Ազատագրելով Երեւանի բերդը՝ ռուսները ազատագրեցին նաեւ հայ միտքը եւ մերձեցրին այն ռուս մշակույթին: Այն պահին, երբ էջմիածնի զանգերն ազդարարեցին հաղթանակի մասին, հայ ժողովուրդը ազատագրվեց նաեւ միջնադարյան սնոտիապաշտությունից: Աբովյանն առաջինն էր, ով օգտվեց ռուս-հայկական հաղթանակի պտուղներից, սակայն այդ հաղթական դեպքերի մասին պատմող վեպը երկար տարիներ անձանոթ մնաց ռուս ընթերցողին, եւ միայն 20-րդ դարի 40-ական թվականներին Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի թարգմանությունը հանձնարարվեց Սերգեյ Շերվինսկուն:

Ինչպես մշվեց, վեպի այս թարգմանությունն առաջինն էր եւ ռուսի էլ ավելի էր պարտավորեցնում թարգմանչին, սակայն

պետք է ասել, որ բնագրի թարգմանությունը նաեւ մի շարք այլ դժվարություններ ուներ: Նախեւառաջ Աբովյանի վեպն իր լեզվի, ոճային բարդ լուծումների եւ զգացմունքայնության ու հռետորականության պատճառով համարվում էր գրեթե անթարգմանելի: Ոճային առումով բարդություն էր ներկայացնում այն համազանցքը, որ վեպում զուգադրված են գրական եւ առօրյա խոսակցական ոճերը: Փոքր-ինչ ուշադիր ընթերցողը կարող է նկատել այդ տարբեր, երբեմն անգամ անհամատեղելի ոճերի կիրառությունը: Աբովյանը մեկ համոզեւ է գալիս որպես ռեալիստ, մեկ որպես սենտիմենտալ հեղինակ եւ մեկ էլ աչքի է ընկնում իր ռոմանտիկությամբ:

Շարունակելի

Վաթսուկանների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 4, 5

Մաթեոսյանն իր ելույթներում կարեւորություն է տալիս աշխարհայացքին եւ ստեղծագործական «ես»-ին, որոնց միասնությամբ եւ գոյանում է գրողի աշխարհը: Աշխարհայացքի եւ ստեղծագործական «ես»-ի միասնությունն է նաեւ, որ կյանքի անսպառ հարստությունից որոնում, հայտնաբերում, գտնում է իրականության այն մասը, այն շերտը, որն ավելի խոր ու լիարժեք է տեսնում ու զգում նա: Եվ այդ տեսածն ու զգացածն իրենց ներքին հարստությամբ դառնում են գրականություն՝ «որոշակի տեսանկյունից դիտված մի ամբողջական կյանք» (Յ. Մաթեոսյան, «Այսպես կոչված գյուղագրության մասին», ԳԹ, 1968, թիվ 37, 13 սեպտեմբեր): Իսկ այդ «որոշակի տեսանկյունից դիտված մի ամբողջական կյանքը» ոչ թե սոսկ դեպքերի ու պատմությունների շարան է, այլ գրողի աշխարհայացքի եւ ստեղծագործական «ես»-ի արտահայտություն: «Ամեն մի կարգին գրողի ստեղծագործությունն այդ գրողի աշխարհայացքի ու փիլիսոփայության իրացումն է, գրողը դեպքեր շարադրող չէ, այլ աշխարհը յուրովի բացատրող կամ բացատրելի փորձող» (Մույն տեղում): Մաթեոսյանն իր նախասիրություններով ավելի հակված է կյանքի տեսական մտածածք ունեցող եւ որոշակի զգայական վերաբերմունքով արժեքավորված ու իմաստավորված նյութի գեղարվեստական յուրացմանը: «Զգացմունքներ է հարուցում շատ ավելի երեկվա օրը, քանի որ հիշողության երեկվա հովիտը բնակեցված է ցանկալի կամ աստելի դեպքերով ու դեմքերով, որոնք են մեր հիշողությունների ոսկի մատվածքը, հենց որն էլ կարող է դառնալ գրականություն» (Մույն տեղում): Ըստ

էության՝ ճիշտ, սակայն միակողմանի միտք է սա, ինչի համար մի շարք օրինակներ է հիշատակում Մաթեոսյանը: Այդ օրինակները կարելի է բազմացնել կյանքի եւ գրականության այլ փաստերով: Սակայն չպետք է մոռանալ, որ մույնքան զգացմունքներ է արթնացնում նաեւ ներկա օրը, գործող պահը, իր բառապաշարով՝ թարմ հիշողությունը: Օրինակները քիչ չեն. հիշենք Ատոմ Յարճանյանի (Սիսմանթ), Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի ստեղծագործությունները, հիշենք Պարույր Սեալի «Եղիցի լույս» ժողովածուն, որոնք անմիջական անդրադարձ են իրականությանը: Մաթեոսյանի միտքը կարեւոր է ոչ թե որպես բացարձակ ճշմարտություն, այլ իր իսկ գրական սկզբունքները բացատրելու առումով: Անցյալին ու ապագային ուղղված այս ստեղծագործական հայացքների տարբերությունը մի պահ հիշեցնում է 20-րդ դարասկզբի արեւմտահայ գրականությունը: Մի կողմից ապագայապաշտ միտում՝ հանձին Կ. Ջարյանի «Մեհյան» հանդեսի եւ ապագայապաշտության, մյուս կողմից անցյալապաշտ միտում՝ հանձին Դ. Վարուժանի «Նավասարդ» տարեգրքի ու անցյալապաշտության: Այս երկու հոսանքներն էլ դարասկզբին տարան իրենց փայլուն հաղթանակը, ինչը պայմանավորված էր բացառիկ տաղանդների առկայությամբ: Այդպես է, գրականության, ընդհանրապես արվեստի մեջ հաղթանակն այնտեղ է, որտեղ տաղանդն է, իսկ հոսանքներն իրենց ներկայացուցիչներով գալիս են ու գնում:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ԻՄԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ՄԵՍՈՒՆԲԱՐԱՆԸ



← էջ 3, 6

Ինչպես Կոմիտասի, այնպես էլ բազում այլ գործիչների անհատական ֆոնդերում, ինքնագրերից զատ, առկա են նաեւ լուսանկարներ, նվագարաններ ու կերպարվեստի ստեղծագործություններ, ծայնակավառնակներ, ծայնատեսաժապավեններ, ազդագրեր, ծրագրեր, լուսանկարներ, երգարաններ եւ այլն, որոնք համալրվում են համապատասխան հավաքածուներում առկա նյութերով: Հավաքածուներում առանձնակի դաս դասված են նաեւ հայ գուսանների ստեղծագործություններ, հայ երաժշտության պատմությանը վերաբերող այլազան նյութեր եւ ձեռագիր երգարաններ: Ֆոնդային այս բաժնում պահպանվող նվագարաններից արժե հիշատակել Սայաթ-Նովային վերագրվող քանանչան, Ձիվանու ջութակը, Շերամի թառը, Կոմիտասի ֆիսհարմոնն ու տարբեր բնույթի սրինգները, Ստեֆան Էլմասի՝ Շվեյցարիայից ստացված դաշնամուրը:

Երաժշտական ֆոնդերի եւ հավաքածուների հարուստ նյութերը հնարավորություն են ընձեռում հիմնավորապես ուսումնասիրելու թե՛ առանձին մեծ ստեղծագործողների ժառանգությունը եւ թե՛ 18-րդ դարի երկրորդ կեսից 21-րդ դարն ընկած ժամանակաշրջանի հայ երաժշտության պատմությունը եւ նրա առնչությունները արեւելյան ու արեւմտյան երաժշտարվեստի հետ:

Արվեստներից ամենաերիտասարդին՝ կինոյին վերաբերող բաժինը, բնականաբար, առավել փոքրածավալ է՝ մոտ 117 ֆոնդ եւ հավաքածու՝ ավելի քան 96 000 թանգարանային առարկայի ընդգրկմամբ: Այստեղ են ի մի հավաքված անվանի կինոթեմադրիչներ Է. Մելիք-Քարամյանի, Ս. Կեւորկովի, Գ. Մելիք-Ավագյանի, Դ. Հովհաննիսյանի, Ա. Հայ-Արտյանի, Լ. Իսահանյանի, Ֆ. Դովաթյանի,

Լ. Վաղարշյանի, Ա. Մամարյանի, օպերատորներ Ս. Իսրայելյանի, Ժ. Վարդանյանի, կինոնկարիչներ Մ. Արուտչյանի, Ս. Անդրանիկյանի, կինոգեոմետր Դ. Դզունու, Գ. Չախիրյանի, մի շարք կինոդերասանների եւ այլոց անհատական ֆոնդերը: Առանձնակի մեծ արժեք ունեն հայ կինոարվեստի ռահիլիրա, համբավավոր բեմադրիչ, դերասան Համո Բեկնազարյանի, նրա հետ համագործակցած անվանի օպերատոր Դմիտրի Ֆելդմանի, խորհրդային ու հայկական մուլտիպլիկացիայի հիմնադիր Լեւ Ատամանովի (Լեւոն Ատամանյան) ֆոնդերը: Անհատական ֆոնդերը համալրում են կինոսցենարների, լուսանկարների, էսքիզների, ազդագրերի եւ մյուս ֆոնդերն ու հավաքածուները: Թանգարանային առարկաների պատկառելի թվով առանձնանում են լուսանկարների, նեգատիվների, սցենարների, ազդագրերի, էսքիզների, մամուլի հավաքածուները, ինչպես նաեւ կինոկազմակերպությունների եւ կինոթերթերի խմբագրությունների ֆոնդերը: Կինոբաժնի նյութերից իրենց կարեւորությամբ առանձնանում են նկարահանված եւ չնկարահանված ֆիլմերի սցենարները՝ հեղինակային ուղղումներով եւ լրացումներով, որոնք ներկայացնում են սցենարի՝ ֆիլմ դառանալու բարդ ու հետաքրքիր ճանապարհը: Առանձնահատուկ կարեւորություն ունեն զանազան կինոնկարների համար արված ձեւավորումները՝ անվանի նկարիչներ Մ. Արուտչյանի, Վ. Պողոսյանի, Ռ. Պ. եւ Ռ. Ս. Բաբայանների, Ս. Անդրանիկյանի կողմից: Այդ ձեւավորումներից շատերը հաճախ ցուցադրվել են տարբեր ցուցահանդեսներում եւ արժանացել բարձր գնահատականի: Անուրանալի է լուսանկարների եւ նեգատիվների հավաքածուի դերը հայ շարժանկարի վերաբերյալ գրքերի, հոդվածների, ալբոմների հրատարակման ժամանակ, քանզի ամեն լուսանկար սերունդներին պահ տրված պատմական փաստաթուղթ է: Բաժնի նյութերի ամբողջականությունը լրացնում են ազդագրերն ու ծրագրերը, զգեստներն ու անձնական իրերը, ֆիլմերի մասին գրված հոդվածներն ու գրախոսականները, կինոսարքավորումները: Այստեղ պահվում են նաեւ եզակի կինոսարքավորումներ, որոնցով նկարահանվել են առաջին հայկական ֆիլմերը:

Շարունակելի

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Զարեհ Որբունու պարմվածքները

← էջ 5, 7

Ամիսներ շարունակ Փարիզի սալահատակների վրա ամբռնում ու սոված գիշերներ էր անցկացրել, բայց մույնիսկ այդ վիճակում պահում էր իր պատվախնդրությունը: Երբ հանդիպում է ծանոթներից մեկին, թաքցնում է իր վիճակը: Գրողը իր հերոսին մեծանցնում է ծառից ընկած տերեւի հետ, որին քամին աննպատակ այս ու այն կողմ է տանում: Օտարները երբեք չեն կարողանա հասկանալ հայի արմատախիլ եղած հոգին. «Ինչպես բացատրել այն: Ինչպես ըմբռնել ծառը առանց հողին ու մեր հոգին, որ տրտմեղդ խշրտոցն է հովերուն մետված չոր տերեւին, որ կցավի ու կիծծի ամեն անգամ, որ հովերը փոխեն իրենց ուղղությունը...» (Զ. Որբունու, Եւ եղել մարդ, էջ 272):

Օտարը երբեք չի կարող մխիթարել հային: Կյանքն իր դաժան ուղիներով է քայլեցրել հերոսին, նա սփոփանք չի գտնում օտար երկրում, ինչպես չի գտնում աշխատանք, որ քաղցած չմնա: Նկարիչը չի կարողանում իր ձիրքը գործի դնել, նկարել, իր նկարները վաճառել: Կորցրել էր ազատությունը: Մարդիկ ազատ են, եթե իրենց ուղի տակ ամուր հող ունեն. «Հող էր ահավասիկ գլխավոր թնջուկը ապրելու արվեստին մեջ: Ատով անհատը կշինե իր չափանիշը հավաքականության մեջ եւ կյանքին դեմ: Արտաքին աշխարհը կար,— ինչպես կա սա ճերմակ թուղթը գրությանս համար, որ շարունակ իբրեւ գաղափարը կլեցնե իր ներքին շտեմարանները: Հարկ էր իրեն վերադարձնել զանոց քիչ-քիչ, որպեսզի ազատությունը ծներ անկե եւ ըլլար զգացում: Այլապես ազատությունը իբրեւ գաղափար պիտի ըլլար այնքան անհեթեթ, որքան աստուծո գաղափարը» (Մույն տեղում, էջ 279—280):

Աշոտի մեծ մարդիկ կյանքից հրաշքներ չէին ուզում: Նրանց ընդամենը աշխատանք էր պետք: Առանց աշխատանքի՝ մարդկանց կյանքը թափառումների մի շղթա էր, եւ այդ ոլորանից դուրս գալու համար միայն աշխատանք էր պետք: «Հրաշք չէ մեր պահանջածը, աշխատանք է, աշխատանք: Անով միայն կարգ ու կանոն կմտնե կյանքի մեջ ու համագոյություն՝ մտքին մեջ: Մեր աշխատանքի պահանջին անմիջապես կիստեւի մտածելու իրավունքը: Առանց անոր մշտական ու ապահով կայունացման, կյանքը ուրիշ բան չէ, եթե քալել, քալել անդադար, շշմված, պարտված ուղեղով» (Մույն տեղում, էջ 281):

Աշոտը երազ է տեսնում: Գործագործները բողոքում են, որ աշխատանք չունեն: Հայտնում է մի իշխան: Նա Արմանին առաջարկում է իր պալատում աշխատել, բայց նա մերժում է: Նա հող է ուզում իշխանից, քանի որ հողը, որի վրա դնում է իր ոտքը, իրենց չէ: Այդ հողը կմշակելու եւ կապրելու: Իշխանը պատասխանում է, որ իր տերության մեջ ազատ հող չի մնացել, դրա համար ժողովուրդն իր հաշվին է ապրում: Իշխանը ի վերջո տալիս է նրան հող, եւ ամիսներ շարունակ Արմանը չարաբարվում է. ոչ մի արդյունք: Ուշագործ է, որ պատմվածքի այս հատվածում հեղինակը պատկերավոր արտահայտում է պանդուխտ հայի թշվառ վիճակը՝ ընդգծելով այն միտքը, որ օտար հողում, եթե անգամ հայը ոտքի տակ հող ունենա, այդ հողը երբեք պտուղ չի տա, քանի որ կտրված է իր ակունքներից: Երբ արթնանում է, միայն մի բան է իրեն մնում՝ գործագործի պարտականությունը՝ քայլել ու աննպատակ թափառել:

Կապիտալի աշխարհում հայ գաղթականության դժվարին գոյապայքարը, ազգային ու բարոյական կորուստները պատկերվում են ֆրանսահայ ու ամերիկահայ, իսկ հետապետերազմյան շրջանում՝ նաեւ Մերձավոր Արեւելքի հայ արձակում: Ամերիկահայ Բենիամին Նուրիկյանի «Մաշած ավել» պատմվածքը միաժամանակ խորհրդանշային է: Մաշած ավելի սիմվոլը կապատական աշխարհի էությունը չափազանց դիպում է բնութագրում: Պատմվածքի հերոսը՝ Ակոբ աղբարը, երկար տարիներ աշխատել է գործարանում, այժմ արդեն ծեր է, սակայն բարեխղճորեն կատարում է հավաքարարի իր գործը:

Չնչին աշխատավարձով հագիվ է ծայրը ծայրին հասցնում Ակոբ աղբարը, եւ մի օր էլ հանկարծ «չարագույժ» լուրը, որ հայտնում է վերակացուն, ցնցում է նրան: Նա ազատվում է աշխատանքից՝ որպես ծեր եւ անպետք: Ու ինքն էլ իր աչքին մի մաշված ավել. «Իր խարխուլ մարմինը գործարանն դուրս կը մետե ծանր, բայց անարժեք բեռան մը պես», գրպանում՝ ինը դոլար տասնմեկ սեփ... Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու



Զարեհ Որբունու, Եւ եղել մարդ, էջ 272):

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.07.2021 թ.

Տպաքանակը՝ 1225